## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան,Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/3/2019 ծածկագրով շրջանակային համաձայնագրի ընթացակարգի արդյունքում 2016թ հունվարի 12-ին կնքված պայմանագրում 2019թ հունվարի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Երկարաժամկետ պայմանագիր, կնքված 2016-2020թթ. ժամանակահատվածի համար:

Փոփոխության նկարագրություն ՀՀ Արագածոտնի, Լոռու և Շիրակի մարզերի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) աշխատանքների կատարման պահպանություն: Համաձայնագրի գինը կազմում է 204 609 405 ՀՀ դրամ

Փոփոխության հիմնավորում: *ՀՀ 2019 թ. պետական բյուջեի մասին օրենք /ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշում/:*

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Արտակ Մկրտչյանին:

Հեռախոս՝ 010 59-00-47

Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/3/2019**
**Հայաստանի հանրապետության պետական (միջպետական եվ հանրապետական) նշանակության ավտոճանապարհների պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման**

**ք. Երևան** **<<23>> հունվարի 2019թ.**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ս.Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կապավոր» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Աքաղյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2016թ. հունվարի 12-ին կնքված ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/3 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու և Շիրակի մարզերի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկման մակարդակները 2019թվականի համար՝ համաձայն սույն Համաձայնագրի N 3 հավելվածի:

1.4 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2019 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 204 609 405 (երկու հարյուր չորս միլիոն վեց հարյուր ինը հազար չորս հարյուր հինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման 2019 թվականի համար ընդհանուր գինը կազմում է՝ 76 498 695 (յոթանասունվեց միլիոն չորս հարյուր իննսունութ հազար վեց հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման 2019 թվականի համար ընդհանուր գինը կազմում է՝ 83 465 655 (ութսուներեք միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման 2019 թվականի համար ընդհանուր գինը կազմում է՝ 44 645 055 (քառասունչորս միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար հիսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու և Շիրակի մարզերի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների 2019 թվականի համար սույն համաձայնագրով կապալառուին կտրամադրվի կանխավճար՝ համաձայնագրով նախարեսված աշխատանքների ընդհանուր գումարի մինչև 20 (քսան) տոկոսի չափով. Պայմանով, որ Կապալառուն նախապես Պատվիրատուին կներկայացնի երաշխիքի ձևով կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով:

2.3 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

2.4 Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

2.5 Դեկտեմբեր ամսվա համար նախատեսված վճարումները կատավում է մինչև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գնումների մասով ստանձնած պարտավորությունների կատարման համար նախատեսված վճարումների վերջնաժամկետը:

**3.Պայմանագրի 2.4 կետը լրացնել նոր 2.4.4 ենթակետով հետևյալ բովանդակությամբ.**

<<2.4.4 Կատարողը պարտավոր է.

Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման ընթացքում ապահովել.

1) ճանապարհային կահավորանքի, այդ թվում՝ նաև արգելափակոցների վնասման դեպքերի հաշվառում, որը ներկայացնում է պատվիրատուին՝ յուրաքանչյուր եռամսյակ,

2)կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը ճանապարհատրասպորտային պատահարների դեպքի վայրում, անհապաղ տեղեկացնել

պատվիրատուին պատահարի մասին, մասնակցել արձանագրության կազմմանը, հանդես գալ որպես կողմ պատվիրատուի անունից>>:

**4.Այլ պայմաններ**

4.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

4.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

4.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1,2 և 3 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.4Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**5.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518
--------------------------------
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
«Կապավոր» ՍՊԸ
ք. Ստեփանակերտ, Աջափնյա 2
«Հայէկոնոմ բանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008123412
ՀՎՀՀ 90003442
--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 1
<<23>> հունվարի 2019թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/3-2019 համաձայնագրի

## Գնման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Գնումը՝ 2019թ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների | **19,124,674,0** | **19,124,674,0** | **19,124,673,0** | **19,124,674,0** | **76,498,695,0** |
| 2 | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների | **20,866,414,0** | **20,866,414,0** | **20,866,413,0** | **20,866,414,0** | **83,465,655,0** |
| 3 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների | **11,161,264,0** | **11,161,264,0** | **11,161,263,0** | **11,161,264,0** | **44,645,055,0** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
«Կապավոր» ՍՊԸ
ք. Ստեփանակերտ, Աջափնյա 2
«Հայէկոնոմ բանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008123412
ՀՎՀՀ 90003442

(ստորագրություն)

Հավելված 2
<<23>> հունվարի 2019թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/3/2019 համաձայնագրի

# Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

| Հ/Հ | Ձեռքբերվող աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | Ընդամենը տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների | 25,499,565,0 | 25,499,565,0 | 25,499,565,0 | 40,799,304,0 | 40,799,304,0 | 40,799,304,0 | 56,099,043,0 | 56,099,043,0 | 56,099,043,0 | 76,498,695,0 | 76,498,695,0 | 76,498,695,0 | **76,498,695,0** |
| 2 | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների | 27,821,885,0 | 27,821,885,0 | 27,821,885,0 | 44,515,016,0 | 44,515,016,0 | 44,515,016,0 | 61,208,147,0 | 61,208,147,0 | 61,208,147,0 | 83,465,655,0 | 83,465,655,0 | 83,465,655,0 | **83,465,655,0** |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների | 14,881,685,0 | 14,881,685,0 | 14,881,685,0 | 23,810,696,0 | 23,810,696,0 | 23,810,696,0 | 32,739,707,0 | 32,739,707,0 | 32,739,707,0 | 44,645,055,0 | 44,645,055,0 | 44,645,055,0 | 44,645,055,0 |

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

**ԿԱՏԱՐՈՂ**
«Կապավոր» ՍՊԸ
ք. Ստեփանակերտ, Աջափնյա 2
«Հայէկոնոմ բանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008123412
ՀՎՀՀ 90003442

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
<<23>> հունվարի 2019թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/3-2019 համաձայնագրի

# Արագածոտնի մարզ

2019 թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը (պահպանման ենթակա արգելափակոցներ)

| Աշխատանքի անվանումը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը գծ.մ | Արգելափակոցի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/ | Միավորի գինը /հազ. դրամ/ | Ընդամենը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Աշտարակ | 35,152 | | | 1.365 | 47982.480 |
| Ապարան | 2,835 | | | 1.365 | 3869.775 |
| Արագած | 3,485 | | | 1.365 | 4757.025 |
| Թալին | 14,571 | | | 1.365 | 19889.415 |
| ԸՆԴԱՄԵՆԸ Արագածոտնի Մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության պետական ա/ճ-երի վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող պարսպող հարմարանքների պահպանում | 56,043 | | | | 76498.695 |
| Ընդամենը | | | | | 76498.695 |

## Լոռու մարզ

2019 թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը պահպանման ենթակա արգելափակոցներ

| Աշխատանքի անվանումը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը գծ.մ | արգելափակոցի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկվող հատվածի երկարությունը գծ.մ | Միավորի գինը /հազ. դրամ/ | Ընդամենը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Թումանյան | 15,850 | | | 1.365 | 21635.250 |
| Գուգարք | 12,567 | | | 1.365 | 17153.955 |
| Սպիտակ | 17,100 | | | 1.365 | 23341.500 |
| Ստեփանավան | 10,770 | | | 1.365 | 14701.050 |
| Տաշիր | 4,860 | | | 1.365 | 6633.900 |
| ԸՆԴԱՄԵՆԸ Լոռու Մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության պետական ա/ճ-երի վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող պարսպող հարմարանքների պահպանում | 61147 | | | | 83465.655 |
| Ընդամենը | | | | | 83465.655 |

## Շիրակի մարզ

2019 թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը պահպանման ենթակա արգելափակոցներ

| Աշխատանքի անվանումը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը գծ.մ | արգելափակոցի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկվող հատվածի երկարությունը գծ.մ | Միավորի գինը /հազ. դրամ/ | Ընդամենը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Ախուրյան | 12,368 | | | 1.365 | 16882.320 |
| Անի | 12,160 | | | 1.365 | 16598.400 |
| Արթիկ | 5,686 | | | 1.365 | 7761.390 |
| Աշոցք | 2,439 | | | 1.365 | 3329.235 |
| Ամասիա | 54 | | | 1.365 | 73.710 |
| ԸՆԴԱՄԵՆԸ Շիրակի Մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության պետական ա/ճ-երի վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող պարսպող հարմարանքների պահպանում | 32707 | | | | 44645.055 |
| Ընդամենը | | | | | 44645.055 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

«Կապավոր» ՍՊԸ
ք. Ստեփանակերտ, Աջափնյա 2
«Հայէկոնոմ բանկ» ԲԲԸ
Հ/Հ 163008123412
ՀՎՀՀ 90003442

(ստորագրություն)

Կ.Տ.